

449/26

ՅՍԻԵԼՈՒԱԾ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԴՐՕՇԱԿԵԱՆ ԹԱՔԹԻՔԸ

0

1901, օգոստոս 1, թիւ 15 Նոր կեսանքի մեր ծա-
նօթ խմբագրականը, Միութեան Խնդրոյն վրայ մեր
ամբողջ մտածումը պարզելով, ի միջի այլոց, յստակօ-
րէն կը շեշտէր «միջնորդ», մանաւանդ չէզոք միջ-
նորդ, որ ներկայութեան անհարկի, փաստակար հանգա-
մանքը՝ յեղափոխական կուսակցութիւններու միութեան
բանակցութիւնները վարելու համար:

«Միտքեան իրագործումին համար Հնչակեան կու-
սակցութիւնը կը նկատուի որ «միջնորդի և ոչ այլ պայ-
մանի պիտոյն ունենալու եւ յեղափոխական մարմինները:
Խոսելի մը սիրտով եղբայրակցելու համար միջնորդի
մը, մանաւանդ չէզոք միջնորդներու պէտքը նախատեսելը
մը եւ համոզուած ու գիտակից յեղափոխականներու
ու յեղափոխական կուսակցութիւններու»:

Այս կէտը ճշգրտած էինք յօդուածի մը մէջ, որ կոչ
մըն էր միանգամայն հայ յեղափոխական մարմիննե-
րուն՝ Միութեան Խնդրին նկատմամբ իրենց կարծիք-
ներն ու տրամադրութիւնները անկեղծօրէն, համար-
ձակօրէն, անշահախնդրօրէն պարզելու, եւ որով կ'ըն-
գունէինք ու մէջտեղ կը դնէինք փոխադարձ անստիճան
զօհողութեան օկոզումները:

Ամենուն յայտնի իրողութիւն մըն է, որ մեր այս
կոչը, ազգային խորունկ ու կօկիծաւ բազմանքի մը վըճ-
ողական արտայայտութիւնն ըլլալով, ժողովրդային մեծ
ողնուորութիւն մը յառաջ բերուի, ու մեզի հետ իսկապէս՝
կրնանք ըսել՝ թէ ամբողջ հայ ժողովուրդն էր, որ
սպասեց մասնաւորապէս Դրօշակեաններու պատաս-
խանին:

Երկար լռութենէ վերջ, որ օկոսած էր այլ եւս ան-
բնական թուիլ, Դրօշակ, իր 1901 օգոստոսեան հա-
մարով, հրատարակեց երկտող յայտարարութիւն մը,
որ թէ մեր կօչէն հարկադրուած՝ անոր սղղակի եւ
սպասուած պատասխանը չէր սակայն:

Ահաւաստիկ այդ յայտարարութիւնը,
«Միտքեան բանակցութիւններու արքիս մեզ դիմող
ընկերներուն կը յայտնենք որ այդ բանակցութիւնները
ատենէ մը ի վեր վարող չէզոք անձնաւորութիւններ
ուստաց-
նաւ գրառքեան մը համաձայն՝ շուտով անոր վերջնական
խօսքին կը պատահի: Ամբողջ սրտով կը փափաքէինք,
որ այդ խօսքը նպատատար ըլլար յեղափոխական բոլոր
անկեղծ տարրերու միտքեան»:

Այս յայտարարութեամբ, Արեւմտեան Բիւրօն կը
ներկայացնէր հասարակութեան «չէզոք», անձնաւորութիւն
մը, որ իբր թէ «ատենէ մը ի վեր Միութեան բա-

նակցութիւններ կը վարէ, եզեր: Բայց ո՞ր մարմիննե-
րու միջեւ տեղի կունենայ այդ բանակցութիւնը,
— Հնչակեաններուն եւ Դրօշակեաններուն: «Չէզոք»,
ըսուած այդ անհատը սակայն երբէք, որ և է ատեն,
որ եւ է պաշտօն կամ պաշտօնական մանտա մը չէ
ունեցած Հնչակեան կուսակցութեան անունով խօսելու
և անոր կողմէն «բանակցութիւն վարելու», Արեւմտեան
Բիւրօն գիտէր առ, ու մանաւանդ պէտք էր որ հարցուցած,
զիտացած ըլլար:

Արեւմտեան Բիւրօն յայտարարութիւնը երեւցած է
1901 սեպտեմբերի Դրօշակին մէջ: Եւ Հնչակեան կու-
սակցութեան կեդրոնական վարչութիւնը անկէ ամիս
մը առաջ, 1901 օգոստոս 1ին իր պաշտօնական
օտկանին մէջ բացէ ի բաց յայտարարեց թէ չէզոքի հետ,
միջնորդի հետ գործ չունի ինքը և թէ նոյնիսկ նա-
խատեսք մը կը տեսնէ այդպիսի մէկու մը միջոցաւ Միու-
թեան իրականացումին հետապնդիլ:

Մեր այս յայտարարութիւնը անգամ մըն ալ եւ
հազիւ կարգաւ—զրել զիտացող մարդոց իսկ կրնայ բա-
ցարձակապէս հասկցուցած ըլլալ, թէ Հնչակեան
կուսակցութիւնը իր կողմէն որ եւ է մէկու մը պաշտօն
կամ իրաւաստութիւն տուած չէ՝ բանակցելու:

Արդ, Արեւմտեան Բիւրօն ինչպէս կրնայ, ամիս մը
վերջ, Միութեան բանակցութեան խօսք ըսել: Ինչ
բանակցութիւն է առաջինը որ բանակցութիւն չի կայ,
ինչպէս զայն «վարող», կը կենայ: Ու քանի որ «բա-
նակցութիւն վարող», չի կայ, ինչպէս Արեւմտեան Բիւրօն
կը յանդիման «բանակցութիւն վարող չէզոք անձնաւորու-
թեան մը», առասպելը պատմել ժողովուրդին:

Բայց շարունակենք:
Արեւմտեան Բիւրօն իր միկնոյն յայտարարութեան
մէջ, փափաք կը յայտնէր, որ յեղափոխական «անկեղծ
տարրերու միութեան նպատատար (.) ըլլայ «չէզոք»ին
«վերջին խօսքը»:

Ինչ բանի կը փափաքէր Բիւրօն, իր «ամբողջ
սրտով».— Միութիւնը զիրացնելու:

Եթէ միութիւնը զիրացնել, միանալ էր իր նպա-
տակը, պէտք էր, բնական էր, որ մօտենար, ձեռք
պարզէր անոնց, և միայն անոնց, որոնց հետ պիտի
միանար և որոնք արդէն եղբայրաբար ձայն կուտային,
հրաւեր կը կարգային իրեն:

Իսկ եթէ Բիւրօն նպատակը միանալ չէր, այն
ատեն, քնակտեմարար, Միութեան համար միջնորդ
փնտոնելու, չէզոք միջնորդի մը կառչելու պէտք չունէր:
Եւ եթէ միանալ չուզելով հանդերձ՝ յամառեցաւ «միջ-
նորդ»ին փարիլ ու «չէզոք անձնաւորութեան վերջին
խօսքին» սպասել, պարզ է, անվիճելի է ուրեմն, թէ
Միութեան իրագործումին մտահոգութենէն առաջնորդ-
ուած չէր, այլ իր նպատակն էր պարզապէս «միջնորդ»ին
միջոցաւ օտեղծել այնպիսի քաջըջուքներ, որոնք Մի-
ութիւնը վիճեցնելու միայն պիտի կրնային ծառայել

և որոնք միևնոյն ատեն պիտի կրնային — իր խելքով — փրկել զինքը՝ Միութիւնը վիժեցուցած ըլլալու վտանգաւոր ամբաստանութենէն:

Արեւմտեան Բիւրօին այս վրան բաց վարպետութիւնը ամէն հանգամանք ունէր մեզի կասկած ներշնչելու: Բայց մենք զեռ կը յուսայինք, որ հանրային կենսական գործի մը զերազանց նկատումին առջեւ, Արեւմտեան Բիւրօն և իր կուսակիցները հեղհեղեղ պիտի մտնան ամէն երկրորդական մտահոգութիւն, անցեալէն ժառանգուած ամէն սիօթէմաթիք հակառակութիւն եւ, վերջապէս, պիտի գան աջակցիլ մեզի հայ յեղափոխական եղբայրութիւնը իրականացնելու մեր անուրանալի ճիգին մէջ:

Այս մտածումով, զգուշացանք ո՛ր եւ է յստիտն եղբակացութիւններէ և Արեւմտեան Բիւրօին անկեղծութիւնը հրապարակաւ կասկածի առկայեցնել:

Դրօշակի վերայիշեալ երկտող յայտարարութիւնը բուն հիասթափում մը պատճառած կը, ու շատերը՝ վրդովուած՝ մեզ կը դիմէին հարցնելով, թէ ի՞նչպէս կարելի էր մեկնել Արեւմտեան Բիւրօին այդ վերջին արարքը:

Մենք չուզեցինք յուսախաբութիւնը զրգանել եւ չփութացինք պոռալ, թէ «Դրօշակեանները Միութիւն չեն ուզեր», Ընդհակառակը, ջանացինք վառ պահել ջլատուող յոյսերը ու մենք ալ, մեր կարգին, սպասողական պաշարին զիրք մը բունեցինք 1901, հոկտեմբեր 15, թիւ 20 Նոր Կեանքի մէջ, հետեւեալ օրացաւ տողերով.

«Հնչակեան կոչակցութեան ու հայ ժողովուորի զգացումները բարգմանող մեր ծանօթ յայտարարութիւնները սրպէս զի վճռական ու գործնական հոգի մը վրայ առաջնորդիին, հաստատիին Միութեան խնդիրը՝ կը սպասիինք որ Դրօշակ ալ համանման տրամադրութիւններով պատասխանէր մեր կոչին: Չենք ուզեր ըսել որ բոլորովին յուսախար մնացինք մեր ակնկալութիւններում մէջ, բայց պետք է նաև խեստովանիլ, որ Դրօշակի հակիրճ յայտարարութեան ոգին ու պարտականութիւնը չի կրնար գոհացուցիլ համարուող Միութեան չերմեանող կոչակցութեան համար:»

Մեր այդ միևնոյն յայտարարութեան մէջ ոակայն Չեզոք ըուած անհատին հանդէպ Արեւմտեան Բիւրօին բնած զիրքին նկատմամբ մեր զարմանքն յայտնեցինք, եւ որպէս զի ա՛լ բացարձակապէս անկարելի ըլլալ իրեն չեզոք բանակցողի առասպելին կոթնած՝ իր չկամութիւնը քողարկել, անգամ մըն ալ, աւելի երկարօրէն շեշտեցինք, «Չեզոք միջնորդի, անպատեհութեան մասին մեր արդէն յայտնած համոզումները: Ու աւելցուցինք.

«Սակն բանէ առաջ, յստակ ու աներկիւմի ըլլալ որոշած ըլլալով՝ կը յայտարարենք, որ մենք չենք գիտեր չեզոք մը, որուն բանակցութեան պաշտօն մը յանձնած ըլլանք: Նոյնպէս մեզի իմաց տրուած չէ, թէ Արեւմտեան Բիւրօն չեզոքի մը պաշտօն յանձնած ըլլալ՝ մեզ հետ բանակցելու համար:

«Սակայն չենք սեպեր սակայն նկատել, թէ Արեւմտեան Բիւրօն յա՛նչքէն Միութեան մասին ո՛ր եւ է բանակցութեան սկիզբի հիմնադրով միայն Հնչակեան կոչակցութեան կեդրոնական վարչութեան պաշտօնապէս և հրապարակաւ ըրած յայտարարութիւններուն վրայ, քան թէ որոշումներուն սպասելով Չեզոքի մը, որ Միութեան

քեան խնդրոյն վրայ բանակցելու ո՛ր եւ է յատկաբար չուզի եւ ոչ ալ յանձն Հնչակեան կոչակցութեան խօսելու իրաւունքը:»

Եւ որպէս զի նորանոր ձգձգումներու, նորանոր եւ նպատակաւոր թիրիմացութիւններու տեղի չի տրուի, կեդրոնական վարչութիւնը, բացի այս հրապարակային շատ յոտակ ու վճռական յայտարարութիւններէն, մասնաւոր նամակ մըն ալ ուղղեց Արեւմտեան Բիւրօին, Միութեան իրագործումին քանի մը հիօթական կէտերը առաջարկելու համար, որոնք ընդունուելուն պէս՝ երկու կուսակցութիւններու լիազօրները զէմառ զէմ պէտք է գային, վերջնական լուծում մը տալու համար Միութեան խնդրին:

Այսքան որոշ, կտրուկ ու անառակելի յայտարարութիւններէ վերջ, կրնայինք սպասել, որ Արեւմտեան Բիւրօն մեզ հետ ուղղակի բանակցութեան մանելու իր հաւանութիւնը փութար հաղորդել մեզի: Եւ սակայն մեծ եղաւ մեր զարմանքը, տեսնելով որ Արեւմտեան Բիւրօն կամաւ չուզէր հասնալ մեր ամենապարզ խօսքերը, կը յամարի վարձեալ «Չեզոք» խօսք ընել, «Չեզոք» վերջին խօսք, ինչ սպասել, «Հետեւողականութեան» անակնկալ ու ծիծաղաշարժ առարկութեամբ մը:

Ահաւասիկ բիւրօին պատասխանը.

«Նախ քան ձեզի պատասխանելը հարկ համարեցինք կրկին անգամ դիմել Պ. Մխիթարին, խնդրելով որ անյապաղ հաղորդէ մեզի, թէ ո՞ր յանգամ է իր միջնորդութեամբ եղած բանակցութիւններու եզրակացութիւնը: Որովհետեւ բանակցութիւններու բոլորովին մեր ձեռնարկի մը դիմելէ առաջ, բաւ մեզ, աւելի բանաւոր ու հետեւողական ըլլալ կը բռնի հարցը փակել իր սկսած օրինակի մէջ հետեւողականութեան մէջ:

«Պ. Մխիթարի մեզի խոստացած եւ զժրպիտարար ցարդ յետաճգած «վերջին խօսքը» ստացուելուն պէս, մենք կը փոքրանք ձեզի հաղորդել Արեւմտեան Բիւրօնի կարծիքը ձեր առաջարկած ուղղակի բանակցութիւններու առթիւ»:

Այս երկտողը ամէն բան կը պարզէր մեզի: Մեանգամ ընդ միշտ հասկցանք, թէ կը գանուկինք մարդերու առջեւ, որոնք համար անհրաժեշտ յատկութիւններ չեն ուղղամտութիւնն ու անկեղծութիւնը եւ որոնք չեն վարանիր ամէն էնթօթիկի դիմելու, ամէն կեղծիքի իջնելու՝ խուսափելու համար Միութեան իրականացումէն, այօինքն խուսափելու համար մեր ընդունած և առաջարկած զոհողութիւններէն, զորս գոնէ շտկելիապէս մերժելու համարձակ քաջութիւնն ալ չունին:

«Հետեւողականութեան» խօսք կ'ընէր Արեւմտեան Բիւրօն: Բայց ի՞նչ տեսակ հետեւողականութիւն կրնայ ըլլալ առ, ի՞նչ բանի հետ հետեւողական կուզէր ըլլալ Արեւմտեան Բիւրօն, — իր «Չեզոք»ին ատենէ մը ի վեր խաղացած շիլ կատակերգութեամբ հետ, — քանի որ իրապէս բանակցութեան տեղի ունեցած չէր երկու կուսակցութեանց միջեւ, «Չեզոք»ին միջնորդութեամբ:

Արեւմտեան Բիւրօն ի՞նչպէս կը յանդգնէ «բանակցութիւն» կոչել անցեալին մէջ իր «Չեզոք»ին մէկ քանի նամակներուն պատասխանի արժանացած՝ ու յետոյ անոր հետ ամէն յարաբերութիւն խզուած ըլլալու պարզան:

Արդեօք «բանակցութիւն» բառով ակնարկելու կուզէր Արեւմտեան Բիւրօն կարգ մը այլանդակ նամակներու,

որոնցմով իր «Չէզոք»ը վարժուեր էր խելագար հրա-
մաններ, ծիծաղելի օպտուպիքներ և հիւանդագին նա-
խատինքներ ուղղել պարբերաբար մեր պաշտօնական
և աւելի յաճախ մենկ ումանց անհատական հասցէին:
Բայց «բանակցութիւն» կարելի է բռնել, քանի մը ամիսն
անգամ մը, միզ զուարճացնել ու մանաւանդ արգահա-
տեցնել հասնող «գիր»երու, որոնց շատաստիանելու
արտցաւ խնամքն ունեցած ենք:

Ենթադրենք նոյնպէս որ «Չէզոք»ին մեզի ուղղած
ու միշտ անպատասխանի մնացած նամակները նշանակու-
թիւն մը ունեցած ըլլան Արեւմտեան Բիւրօին համար: Բայց
չէ՛ մի օր, բիւրօին յայտարարութիւնէ՛ն առաջ, Միութեան
Խնդիրը հրապարակաւ մեր ձեռք առած առաջին օրէն
իսկ, պաշտօնական յայտարարութիւններով, բանակցու-
թան ամէն կասկած ու ենթադրութիւն միանգամ ընդ
միշտ չրած էինք, ու Արեւմտեան բիւրօին «հետեւե-
ղականութեան»՝ առարկութիւնը բերող նամակէն ալ ա-
ռաջ ո՛ր եւ է չէզոքի հետ, ո՛ր եւ է կապ չունենալնիս աւելի
քան յօտակօրէն շեշտած էինք, 1901 հոկտեմբեր 15,
թիւ 20 Նոր կեանքի մէջ հետեւեալ սողերով:

«Մենք Միութեան Խնդիրը ձեռք առինք, առանց
ո՛ր եւ է չէզոքի կամ ներգործականեք քելարուած ըլլալու,
այլ որովհետեւ օգտակար կը նկատենք Միութիւնը յե-
զափոխութեան գերագոյն տեսակետով:

«Մեր Միութեան առաջարկը 96էն մինչեւ 1900
տեղի ունեցած անհատական կամ հասարակական տխուր
ու ապարդիւն բանակցութիւններուն հետ ո՛ր եւ է կա-
պակցութիւն չունի:»

Դարձեալ նոյն թիւին մէջ.

«Մենք չենք գիտեր չէզոք մը, որուն բանակցութեան
պաշտօն մը յանձնած ըլլանք: Նոյնպէս մեզի իմաց
տրուած չէ թէ Արեւմտեան Բիւրօն չէզոքի մը պաշտօն
յանձնած ըլլայ մեզ հետ քանակեցելու համար:

Արեւմտեան բիւրօն օակայն անգիտանալ կը ձեռացնէ
այս բարբառ և թելադրական այլուրութեամբ մը ակնաչ-
նորը խցած՝ կը յամառի մնալ իր խուռափուկ ու երկդիմի
գիրքին մէջ: Եւ երբ կը ստիպուի վերջապէս բան մը
ըսել, պատասխան տալ «ուղղակի բանակցութեան»
մեր ուղղակի հրաւերին, ուրիշ բան չի գտներ առաջ
քշելու, բայց եթէ հետեւողականութեան ու օրինա-
կան ձեւակերպութեան անիմաստ ու անարժան առար-
կութիւնը:

Բայց աւելին կայ: Արեւմտեան բիւրօն հետե-
ւողականութեան առարկութեան աւելի քան ամիս մը
առաջ, մեր ընկերներէն մին՝ Բարիզ, պաշտօնապէս,
Չէզոքին ալ յայտարարած էր անձամբ, թէ Հնչակեան
Կուսակցութիւնը Չի կրնար ընդունիլ ո՛ր եւ է չէզոքի
միջնորդութիւնը և թէ Միութեան բանակցութիւնները
ուղղակի Դաշնակցութեան վարիչ մարմնին կամ անոր
կողմէ նշանակուած լիազօրներու հետ պիտի կատարէ,
(Տես Նոր կեանք 1901, նոյեմբեր 1, թիւ 21):—Ահա՛
միակ վերջնական խօսքը, զոր «Չէզոք»ը կրնար, եւ
զոր արդէն պարտաւոր էր, հաղորդել Արեւմտեան բիւրօն:

Այս ամէնը՝ դարձեալ բիւրօն հետեւողական-
նամակէն առաջ՝ բացարձակ պարզութեամբ մը գրած
էինք Նոր կեանքին մէջ և հետեւաբար Արեւմտեան բիւրօն
տա՛ն անգամ ըլլալով լսած, իմացած էր որ «չէզոք» ի,
ներգործական ի հետ կապ չունինք, բանակցութիւն
չունինք:

Արեւմտեան բիւրօն կարգացած էր, գիտէր մեր այս

յայտարարութիւնները: Բ: գիտնալով հանդերձ, կը յա-
մառէր «Չէզոք» ի խօսք ընել, հետեւողականութեան
պատուակին կոթնիլ, պարզապէս՝ միութեան կարուկ ու
վճռական ճամբէն շեղելու, եւ ձգձգումի միջոցներով
Միութեան Խնդիրը մոռցնելու մտահոգութեամբ:

Արեւմտեան բիւրօն իր «հետեւողականութիւնը»
պատուակող երկտողը կը վերջացնէր սա խոստումով.

«Պ. Միութեան մեզ խոստացած և դժբաղդարար
ցարդ յետաձգած «վերջնական խօսք»ը ստացուելու
պէս, մենք կը փոքրակն ձեզի հաղորդել Արեւմտեան
Բիւրօնին կարծիքը ձեր առաջարկած ուղղակի բանակցու-
թիւններու մասին»:

Այսպէս ուրեմն՝ եթէ Միութեան կոչուած անհատը
ախտաւոր բժակաճոյքով մը, տասը տարի ետ իր պա-
տասխանը ուշացնէր,—ինչպէս ուշացուցեր, «յետաձգեր»
է եղեր մինչեւ վերջին օրերս—արեւմտեան բիւրօն՝
հաւատարիմ իր «հետեւողական» սկզբունքին, հայրե-
նասիրական պարտականութիւն մը պիտի սեպէր տասը
տարի ետ սպասել ամբողջ ազգին բաղձացած Միութեան
բանակցութիւնը սկսելու համար:

Ու այդ տասը տարուան ընթացքին, նոյն Բիւրօն՝
Հնչակեան Կուսակցութեան ու հայ մոզովորդին պիտի
պատասխանէր, անգագար կրկնելով.

—Սպասեցէք, Միութեան «վերջին խօսք» պիտի
դրէ, մենք հետեւողական ենք:

Այս «հետեւողական» երկտողը՝ անգամ մըն ալ կը
հաստատէ Բիւրօնին Միութեան հանդէպ չկամութիւնը:

Յուստիարարութիւնը արդէն զգուանքի հասած էր
մեր ներսիցին: Բայց նորէն, տարապայման խղճահա-
րութեամբ մը, զգուացանք արեւմտեան բիւրօն ըն-
թացքը սրակելէ: Ու սպասեցինք:

Ամիսներ անցան, ու արեւմտեան բիւրօն «կարծիքը»
չէր ի գար:

Ու ահա օր մըն ալ Հնչակեան Միութեան իրակա-
նացումին աւետիոր խոյացաւ ամէն կողմ:

Կացութիւնը յանկարծ փոխուած էր: Պէ՛տք էր, ան-
հրաժեշտ էր Հնչակեան Միութեան յառաջ բերած մօ-
ղովորային փառաւոր խանդավառութիւնը խանգարել,
պղծել նկրտիլ, Հնչակեանութեան շուրջը մտքերը պղղ-
տորելու ցաւագին ու անզօր փորձն ընել, և Միութեան
իրենց խուռափուկը արդարացնելու ճարտարուորի՛ ա-
մէն գնով:

«Վերջին խօսք», ը փոխուած է: Դրօշակ՝ «Յուսուած»,
կը հանէ:

Արեւմտեան Բիւրօն ինչպէս կը ներէ ինքզինքին
հայ հասարակութեան հրամայելը՝ Հնչակեան Կուսակ-
ցութիւնը վարկարեկելու տարամերժ այլ օրհասական
ակնկալութեամբը դուրս տրուած այդ փոխունքը,—եւ
աօ՛ր՝ այն նամակէն վերջ, որով Հնչակեան Կուսակ-
ցութեան Կեդրոնական Վարչութիւնը աւետած—թերևս
գուժած—էր իրեն Հնչակեան Միութիւնը ու ազգարա-
րած՝ թէ ամբողջ Կուսակցութեան ջուէով անյապաղ
կազմուելիք Հնչակեան Կեդրոնին է որ այլ եւս պիտի
կրնայ զրկել «ուղղակի բանակցութիւններու» մասին իր
խոստացած պատասխանը:

Բայց Արեւմտեան Բիւրօն չշատանար միայն Չէզոքին
աման ու անարգութեան օժանդակութեան կատարելով, այլ կը
փորձուի—հին, գիւրիւն ու միամիտ թաքթիկ—բիրտ վի-
րաւորանքներով մեզ գրգռել, բանակուի մը ստեղծել
որպէս զի՛ անոր անձնատուր՝ հարկաւորաբար անտխորժ
ըլլանք իրենց նկատմամբ ու մատակարարենք իրենց

ձանօթ, փնտուած, սպասուած զէնքը.

— Մեզ կը նախատեն կոր, մեր վրայ կը յարձակին կոր, ինտօր միանանք առանց հետ:

Չէ՛, այդ զէնքը չպիտի աանք մենք Արևմտեան Բիւրօին, ու մարդկօրէն չպիտի կրնայ ըտելիլ, թէ «Հրն. չակեանները Միութեան արգելք եղան»: Ասիկա լաւ գիտցած ըլլան: Այդ ձեռնտու պատրուակը, փախուստի այդ հեշտին միջոցը իրենց ընծայելու տենջանքովը չէ որ ամիսներէ ի վեր կուլ կուտանք նախատինքներ եւ սպարդուքներ, որոնք կը հասնին մեզի պաշտօնական կամ անպաշտօն, բայց ապահովաբար զրօշակեան օոկաններէ:

Այս անգամ Դրօշակն է որ աւելի քան պաշտօնապէս բերանը կ'աւրէ:

«Անմտած յոխորտանքներ, կիրք, քաղաքացիական ահաստութիւն, անհրաժեշտ վերապահում, հասկանալի յապաղում» (.) եայլն: Ահա սիրուն փունջ մը գգուական բառերու, զոր Դրօշակ կը նետէ մեր երեսին և որ սահմանուած չէ անշուշտ խանդաղատագին զգացումներով զգլխելու մեզի:

Արևմտեան Բիւրօն կրնայ տող մը, բառ մը մատնանիչ ընել մեր յայտարարութիւններուն, յօգուածներուն մէջ՝ որ հեռաւորօրէն կարենայ արդարացնել իր «յոխորտանք»ի ու «գրգռում»ի մեղադրանքները, կամ որ վերաւորիչ շեշտ մը ունենայ որ եւ յեղափոխական կազմակերպուած մարմինի նկատմամբ:

Շատ դիւրին պիտի ըլլար մեզի ի վեր հանել բովանդակ մազէն որ կը խտանայ Արևմտեան Բիւրօին շնորհալի՝ խօսքերուն եւ շարածիտ ու անազնի սպըր-զուքներուն մէջ: Պատասխանելու, եւ ջախջախիչ կերպով պատասխանելու, կարելիութիւնը չէ որ մտահոգութիւն պիտի պատճառէր մեզի: Կը կարծենք որ բառական ապացուցիչք մինչեւ հիմա, թէ շիտակ ու ուժով խօսքն ըսելու համար աչէն ձախէն օգնութեան սպասելու պէտք չունինք: Կոտիւն փախչողներ ալ չենք: Կ'ընդունինք որ կարելիէն աւելի անյիշաչար ու համբերատար եղանք: Բայց երբ չափը անցնի, երբ Միութեան հարկադրած պարտականութիւնները իրենց սահմանը գտնեն, մենք գիտենք հարուածներուն առջեւ երթալ՝ թո՛ղ անոնք գտնանան կողմէն, որոնց դէմ կոչուած ենք կոտիւն և կամ անոնց կողմէն, որոնց հետ պիտի ուզէինք եղբայրաբար քաշել յեղափոխական կոտիւն ճամբէն:

Հիմա, մենք վճռած ենք մեր սկսած գործը մինչեւ ծայրը տանիլ, առանց երբէք շեղելու մեր բռնած—այո՛, կը պնդենք—իսկապէս «անշահախնդիր» ու «աներկ-դիմի» ընթացքէն:

Ու կ'աւելցնենք: Արևմտեան Բիւրօն որ այնքան «գէտ ըլլալ» կը յայտարարէ «անմտած յոխորտանքներ»ու, ինչպէս կ'ըրնայ փութկոտութիւնը, խղճահարութիւնն ունենայ յաղթականօրէն հրատարակելու «գիր»ը, «վերջին խօսք»ը ցաւատանջ մենախտաւորի մը, որուն Հնչակեան Կուսակցութեան հասցէին ուղղած ծիծաղելի սպանալիքները, յուսահատ հրամաններն ու խաւաքարտէ շանթերը չեն կրնար ապահովաբար «Միութեան բանակցութիւնները վարելու» գերազանց մէթօտը նկատուիլ՝ նոյնիսկ Արևմտեան Բիւրօնէն:

Բայց աւելին կայ: Եթէ Արևմտեան Բիւրօն «գէտ էր» «Միութեան բանակցութիւնները վարելու մեր մէթօտին», կը փափաքէինք, մասնաւոր շատ հետաքրքր-քիր ենք գիտնալ, թէ օրն է արդեօք լաւագոյն մէ-

թօտը, իր մէթօտը: Ինչո՞ւ չըտաւ, ինչո՞ւ չըտէր զայն մեզի ու մանաւանդ ինչո՞ւ ԳՈՐԾԱՌԻՐԱԹԵՆԱՆ ՁԻՆԵՐ ՉՈՅՆ:

Արևմտեան Բիւրօն, որ կը համարձակի կասկածի տակ գնել, Միութեան խնդրին մէջ, ամբողջ յեղափոխական կոտակցութեան մը յայտնած զգացումներուն անկեղծութիւնը, ինչպէս կրնայ վստահաբար ընդունիլ ու հրապարակել անհատի մը արիւնքիցի յայտարարութիւնները, անհատի մը, որ իր համոզումներուն և իր կարծիքներուն մէջ ախալելու արդարացումն ալ չի կրնար ունենալ, որ՝ Միութիւնը վիժեցնելու անարգ գործիքն ըլլալու տրամադիր՝ արդէն իսկ գործիք մըն է սակայն մութին մէջ ծածկուած ու մութէն աւելի սեւ հոգիներու, որոնք շուանը կը բռնեն ու լեզու կուտան այդ խամածիկին:

Արևմտեան Բիւրօն որ Միութեան առթիւ մեր յայտարարութիւններուն մէջ, հանրային կարծիքը շահախնդրօրէն զրգոելու գիտում մը կը նկրտի հաստատել՝ ինչպէս անխոհեմութիւնը կ'ունենայ հրատարակելու այդ աւելորդ «յաւելում»ը, առանց վարկեան մը անդրադառնալու, թէ իր այդ արարքը տրամաբանօրէն, մարդկօրէն ուրիշ բանի չի կրնար ծառայել, ուրիշ նպատակ չի կրնար ունենալ, եթէ ոչ «Հանրային կարծիքը զրգոել» և վերադիմարձել ատելութիւնները, զորո մարելու, թաղելու համար շմանակեցեցաւ՝ սակայն տարիէ մը ի վեր մեր յամառ ու անվհատ ճիգին:

Կ'ամփոփենք մեր խօսքը:

Եթէ մեր յեղափոխական զգացումները թող տային մեզ Արևմտեան Բիւրօն այս վերջին «մէթօտ»ին հետեւիլ, նիւթը չէ որ փնտել, հնարել պիտի օտիպուէինք այսօրու ձեռքով հրատարակելու:

Եւ Միութիւնը արգիւելու խնամքով, իթէ արտուր գործիքներ մէջանել նետելու «քաղաքացիական հասունութեան» զիջանէինք, Միութեանը չէ որ կը պակօին:

Բայց յեղափոխական կազմակերպութիւնները տարալուծելու եւ զանոնք եղբայրագու կոտի մը զրգոելու անարգ մտածումը տեղ չէ՛ ունեցած ու չպիտի ունենայ մեր ջանքերուն մէջ:

Արևմտեան Բիւրօն եթէ ամբողջ Հնչակեան մաս, նաճիւղերու կողմէն ցոյց տրուած խանդավառութիւնն ու վստահութիւնը չի տեսներ, եթէ մեր գրութիւններուն ռազմակի եւ ռազմաւտօրէն շուզեր պատասխանել, եթէ կամաւ՝ բարբառնջանքներու նախապատուութիւն կուտայ, առ իր գիտնալիք բանն է:

Բայց յօտակօրէն պիտի կուտանք Արևմտեան Բիւրօն, թէ այդ ճամբան պարկեշտ ու ձեռնտու ճամբան չէ:

Այլ եւս կարելի չպիտի ըլլայ Արևմտեան Բիւրօն իր երկրի մը ընթացքը շարունակել, մէկ կողմէն Միութեան շեղմ փափաքող ձեւանալ ու միտ կողմէն «...»-ներ հանել, որոնք Միութիւնը վիժեցնելու միայն սահմանուած են:

Հայ ժողովուրդը չստիպի հանդուրժէ որ շարունակեն այդպէս իր քթին խնդալ: Պէտք պիտի ըլլայ որ Արևմտեան Բիւրօն իր գիրքը վերջապէս որոշէ: Կամ պիտի ընդունի բացէ ի բաց Միութիւնը կամ պիտի քաշուէ թիւնը ունենայ զայն բացէ ի բաց մերժելու: «Յաւելումները ուրիշ բանի չպիտի ծառայեն, եթէ ոչ ժողովուրդին պոռալու Արևմտեան Բիւրօն անքօղարկելի, անբացատրելի չկամութիւնը:

«Այո՛» կամ «ո՛չ»: Ուրիշ բան չենք հասկնտր—ու չենք ալ կրնար մտիկ ընել:

բայրն ա հայուն համար է: Թիւրք եւ յոյն ազատ են ամէն կերպով: Հիմա վաճառականութիւնը սկսած է Թիւրք հասարակութեան գրամատեր մասին փափաքելի գրազուարթ գործադէ Բրիտանեայ վաճառականները գերազանցելու արձակարգ խանդ մը կայ Թիւրքերուն մէջ, որոնց կառավարութիւնն ալ պէտք եղած գիրութիւնները կ'ընծայէ այս նպատակին համար՝ ու նոյն իսկ կրօնապետներու միջոցաւ խրատուական յորհուրդներ կը կարգայ ահօնց:

Նախորդ թղթակցութիւնով մը, խօսեցայ Օրման-խանի և Երիններուն դաշմակազակն ու անհանգուրծելի ընթացքի վրայ: Պատրիարքարանի վերանորոգութիւնները լմնալու վրայ են ի մեծ գոհութիւն Նորի Ամենապատուութեան Գազարի վիճակը սակայն երթալով կը ձանրաքայ ու ամէն օր կզկծալի ու յատկապէս յանա-կան մանրամասնութիւնները կը հասնին:

Վերջերս Բ. քաղաքի առաջնորդութեան թափուր արժանի հրաւիրուած եկեղեցական մը, որ պողէն ու բնէ քաղաքի մը մէջ առաջնորդական պաշտօն կը վարէ քանի մը տարիէ ի վեր՝ հայ կղերին մէջ հազուապէս իջնահատութեամբ մը ու իր պարտականութեան խորհրդի գեղատեսութեամբ հարկ վատաձէ և մերձեւ իրեն՝ իր անպարտաքական հրաւերը, պատճառաբանեալ նամակով մը, որ միանգամայն զաւրտ արդի վիճակին պարզական տեղեկագիրը կրնայ համարուի:

Վերջինիցաւ եկեղեցականը, յոտակօրէն թուելով գաւառացի հայուն կեանքը անտանելի դարձնող պարտազանները ու անոնց — իր կարծիքով — յարաբերական դարձանները մէկիկ մէկիկ նշանակելով՝ թախանձաղին կը խնդրէ Օրմանեանէն « օր զինքը ազատ թողու առաջնորդական վոճմ ու մեծ պաշտօնին ահաւոր պատասխանատուութենէն », որովհետեւ կ'ըսէ « բազմամեայ պաշտօնավարութեամբս որքան որ շարաշար աշխատեցայ, լացի ու ողբացի, զրեցի ու կեղերնական պատկառելի վարչութիւնդ ձանձրացուցի, այնուամենայնիւ ոչինչ կարողացայ ընել ինձի յանձնուած ժողովուրդին վիճակը բարւոյնելու: Հայ գաւառացիին և զինքը հովուող հայ հովիտին համար ոչ մի միտքութիւն չէ: Միայն այլ և ո: Եթէ հովիւը մի չէ ու կորովէ զորով է ու իր պաշտօնին գիտակցութիւնը չունի՝ երբէք նշանակութիւն չեն տար անոր: Իսկ եթէ իր անձնութիւնն ու աշխրհ-ջութիւնն ի գործ դրէ վնասակար ու խոտմարար կը նկատեն զինքը: »

Թղթամիտ կղերականը, անկեղծ ու սրտաբուխ շեշտով մը կ'աւելցնէ. « Այսուհետեւ, Տէր մի՛ արասցէ որ ու է հովուական պաշտօնով խղճիս դէմ մեղասցեմ եւ անուանական իշխանութեամբ ալ Աստուծոյ և Ազգիս դէմ պարտական մնալու քրէական յանցանքը շալակեմ: »

Ու է հայ առաջնորդի համար գաւառի մէջ արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը անկարելի է, կ'ըսէ հայր սուրբը, իր Օրմանեանի զրկած հրաժարականին մէջ, առանց հետեւալ պայմաններուն՝

« Ա. Հայոց Ս. Եկեղեցւոյ կանոնաց դէմ մերանշող հայի կրօնափոխութիւնը չպիտի ընդունուի: »

Եթէ մկր սիրային յարաբերութեան առթիւ ուրանայ և ընտանեաց տէր լինի, պէտք է կնոջ ապրուստն երաշխաւորէ մինչեւ նորա կրկին ամուսնանալը, նոյնպէս ալ զաւակներունը մինչեւ նոցա չափահաս լինելը: »

Գ. Հայոց կրօնին, խաչին եւ սրբութիւններուն դէմ հայհոյողները պէտք է անմիջապէս պատժուին, որովհետեւ այս մասին եղած հանապազօրեայ նախատինքներուն հանգուրծել անկարելի է: »

Դ. Հայոց հոգեւորականներուն զէմ եղած անարգանքներն եւս անպատմելի են և խիստ անպատկառօրէն ի գործ կը դրուին: »

Ե. Հայոց եկեղեցիները զեռ այրուած ու կիտաւեր կը մնան, զէթ հաստատութիւններն իօպառ չկործանելու համար պէտք է նորոգուին, որպէսզի անցեալը մոռցուի: »

Զ. Հայոց Եկեղեցւոյ կրթւածներն ոտնձգութենէ և յափշտակողներէ պէտք է ազատուին, որպէսզի Հայոց մէջ արմատացած յուսահատութեան սոսկումն բուրովին անհետ լինի: »

Է. Հայոց աղքատութեան երեսէն դպրոցներն ալ ևս առանց նպաստի հոգալ անկարելի է, պէթ հայերէն անուում մեարիֆի տուրքէն Հայոց դպրոցներուն եւս բաժին մը տրուելու է, որպէսզի կայսերական միտքութիւնն իօպառ սփոփէ: »

Ը. Հայ դպրոցներու նկատմամբ եղած կասկածները պէտք է վերցուին և քսուներու զրպարութիւնները յայտնապէս հայ առաջնորդին ծանուցուին և մեղաւորք պատժուի, որպէս զի ուսուցիչներ փախուստ չի տան: »

Թ. Չինուորական տրոց անկանոն գանձումն անտանելի է. իսկ տիրող աղքատութեան պատճառաւ վրձարելն անկարելի, մանաւանդ հին պարտքերն, որոնց պարտավճարներէն ոմանք սպաննուած են, ոմանք կորսուած, որոնց աղքատ այրիները կը շարշարուին ու անոնց օրական պարեններն ու միակ ծածկոցներն կը յափշտակուին: »

Ժ. Յաւալի զէպքերու մէջ սպաննուածներու որբերը մինչեւ իրենց չափահաս լինելը մարդահամարին մէջ հաշուելու չեն, որպէսզի անոնց տուրքն աղքատ ժողովրդէն չպահանջուի, այլ մինչեւ իրենց չափահաս լինելը իրենց տուրքը ներուի: »

ԺԱ. Երեսականներէն իօպառ վերցուի ոստիկան հարկահաններու երթեւեկութիւնն ու իշխանապետներով զապթիկներուն յանձնուած գանձումներն որոնց տուած նեղութիւններն թէ անտանելի են, և թէ գարիի տեղ կոր-

կատ ու պղտոր կը կերցունեն ձիերուն, այս մասին աղ-
քառ գիւղացիին դանակն ոսկորին հասուցեր են:

ԺԲ. Հայոց կալուածական տուրքերն կրկին և չո-
րեքկին են, նոյնպէս քեմերքոսն:

ԺԳ. Կ. Պօլիս կամ այլուր առուտուր կամ կալուած
ունեցող գաւառացի Հայոց երթեւեկութիւններն արգիլ-
ուած լինելով, Հեազհետէ թէ գործերը կոչնչանան եւ
թէ կալուածները եւ թէ տիրող թշուառութիւնը անդար-
մանելի կը դառնայ:

ԺԴ. Հայ ժողովուրդը միշտ սոսկալի նախատանաց,
զրկանաց և ծեծուելու ճգնաժամին մէջ կը տառապի և
բողոքել կ'երկնչի վրէժնորութեան շմատնուելու համար:

ԺԵ. Մեանդներու անունները տարիներով զինուո-
րական տրոց տուարէն շնն շնջեր, առարկելով թէ պը-
սակաթուղթի (միանաքեհար) զրամներն պնովճար թողու-
ցեր են:»

Խօսքը Օրմանեանինն է:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԱՂԷՏ. Կ. Պօլսէն յուսիս 2 քուականով կը
հետադրուի քի Մոսշ կացութիւնը ահեղապէս ծանրա-
ցած է: Քիտրտերը Հայոց գիտելորտն վրայ յարձակե-
լով զանոնք քալեր, կողոպտեր, այրեր են: Նաև հայ
գիտելցիներ շարդեր, կոտորտեր են: Քիտրտերը իրենց
այս նոր շարագործութիւնները արդարացնելու համար
կը յայտարարեն եղեր քի հայերը իրենց Երիֆ ազան
սպաննած ըլլալով իրենց ալ վրէժնին լուծեր են:

Դուռը, ըստ սովորութեան, հերքում տուառ քա-
լանի ու կոտորածի լուծերուն:

ԱԼՊՈՆԻՍ. գրաւած սպանական գիրքովը մտացնել
կուտայ նաև մակեդոնական խնդիրը: Եւրոպայի բո-
լոր ուղադրութիւնը քրքական գործերուն մէջ, այժմ
յառած է Ալպանիա, ուր քիտրք իշխանութիւնը բոլոր-
րովին անգորութեան դատապարտուած է, վասնզի
սուրբանը կը վախնայ որ Ալպանիացիները անկախու-
թիւն կը յայտարարեն: Դարատաղի և Սերպիոյ սահ-
մանագլուխներուն վրայ ընդհարումներ տեղի կուանե-
նան, և քիտրք զինուորները քրիտոնեաները կը նեղեն:
Պատիկ երկու պետութեանց Պօլսոյ ղեկավարները Դանէն
պահանջեր են որ սահմանազիւսի Նիզամ զինուորները
եւ կանչուին:

ԻՏՈՒԼԻՍ. ԵՒ **ՈԼՊՈՆԻՍ.** Ալպանիացիները իտա-
լացիներուն յարեկամութենէն կը շանան խոյս տալ:
Իրենց յեղափոխական բերքը, որ ժընկէկ կը հրատա-

րակուի, կը յայտարարի քի Ալպանիոյ նպատակը ինք-
նավարութիւն է և ոչ քի քրքական լուծին փոփոխութիւնը
իտալականին հետ:

Հասանական է որ Ալպանիա մինչեւ հիմակ ինք-
զինքը անկախ հռչակած էր, երբ չի վախնար որ Քիտր-
քիայնէ հիմնովին անջատուած կը գիւրացնէ իտալական
գրաւումը:

ՍՈՒԼԹՈՆԻՆ ԹՈՒՓՍՏՈՑԸ. Կ. Պօլսէն կը հետա-
գրեն քի Երլարզ Գեօշին մէջ վերջերս տեղի հանեցած
դատարարութիւններէն և մեքենայութիւններէն բուրտովին
սարսափանար՝ սուրբանը իրեն քաջստոց մը շինելու
գաղափարը յղացած է:

Հրամայած է, որ պարտեղին մէջ մասնաւոր քեօշք
մը կատարուի, անկիզեղի նիտերէ պապանդութեան
համար:

Քեօշքին շուրջը լիճ մը պիտի շինուի, ու երբ սուր-
բանը քեօշքին մէջ իր բնակութիւնը հաստատի, ինչպէս
որ մտադիր է ամառը եւ բուրտ ձգեմծամներու ժամա-
նակ հաստատել, գիշերապահներ մինչեւ լոյս լիճին և
զերքը շրջան պիտի ընեն:

Սուրբանը իր հարեմի կիներէն շատերը ձերբակա-
լել տուած է, իրր հետեանց կասկածներու որ անոնց
մէկին վրայ կը ծանրանար պալատի մէջ վերջերս տեղի
ուանեցած հրդեհին հետ կապ ունենալու ամբաստանու-
թեամբ:

Ապառջ Համարը քարեկարգութեան կուսակիցնե-
րու գործունէութենէն մահու չափ կը սարսափի եւ կը
կասկածի քի անոր ազդեցութիւնը մինչեւ իսկ իր ըն-
տանեկան շրջանին մէջ տարածուած է:

ՆՈՐ ՀԱՍՑԷ

«ՆՈՐ ԿԵՍՆՔ»-ի վերաբերեալ նամակ ու բաժ-
նեզին զրկել հետեւեալ հասցէին:

REDACTION DU "NOR-GUIANK,"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՍՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
է 15 ին: Բաժնեզինն է Եւրոպայի համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
ու վեցամսեայ 1 ամլար: